

առաջին քաղաքային այս իշխանութեան ի հարկին դիմում
ընելու պարագան Պատրիարքի մը պաշտօնէն ուղղակի
բղխող հեղինակութեան հետ ո՛րքէն ազերս մը չունի։
Ի կամս Ազգ. Ժողովին թողլով այս ամէնը, սրբազան
պարտք կը համարիմ վերստին կրկնել, որ ազգամլեաց ընդ-
հարումներուն երկայ պարագային ընդունուելիք միակ
միջոցն է համերաշխութիւնը իր հնարաւոր ձերն տակ,
որուն իրականացումը ցանկացող եմ ի սրտէ։

(Սս.) Եղիշէ Արեւազկ. Դուռեան

Դատըգիւղ 5 նոյեմբեր 1910.

ՀԻՄՆԱԳԻՐ ԱԶԳ. ԵՐԵՍՓ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԿԵՆՈՐՈՆԻ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ

4. Պօլսոյ Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովոյ մէջ
կազմուած է Խմբակցութիւն մը «Կենդրոնի Խմբակցութիւն» անունով։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔ

«Կենդրոնի Խմբակցութեան» բովանդակ գործունէութիւնը
կէտ նպատակի պիտի ունենայ յետագայ սկզբունք-
ներուն իրագործումը։

Ա. Բարձրացում՝ Հայ Ժողովրդին բարոյական և մտա-
ւորական մակարդակին՝ խաղաղ և բնականօրէն զարգացումի
պայմաններով։

Բ. Անվթար պահպանում՝ ազգային Հայաստանեայց
Եկեղեցւոյ իրաւանց և առանձնաշնորհումներուն։

Գ. Տարբեր դաւանանքի պատկանող Հայ հասարա-
կութեանց հետ ազգային համերաշխութեան ամրապնդում
և կրթական գետնի վրայ ընդհանուր գործակցութիւն։

Դ. Անթերի գործադրութիւն ներկայ Ազգ. Սահմա-
նադրութեան, իսկ վերաքննութեան պատեհ առիթին՝
հիմնուիլ յետագայ սկզբունքներուն վրայ։

1. Ժողովրդեան ձայնին ընդարձակութիւն, պարտքի

և իրաւունքի հիման վրայ, ընտրողութեան տարիքն իջեցնելով:

2. Գաւառական Վարչութեանց գործունէութեան վերաբերմամբ ընդլայնում ապականդրոնացման դրութեան, պահելով միշտ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ հեղինակութիւնն իբրեւ օրէնսդիր մարմին:

3. Եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան մէջ նկատառում ժողովրդեան ձայնին:

4. Երեսփոխանական աթոռներու համեմատական քաշսում Կ. Պոլսոյ և գաւառներու վրայ:

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Ե. Անկեղծ պահպանութիւն Ս. Էջմիածնայ Ընդհանուր Հայրապետութեան և իր իրաւասութիւններուն:

2. Կաթուղիկոսական միւս աթոռներուն հետ համերաշխ յարաբերութեանց պահպանում՝ որոշ օրինագրով մը:

Է. Վանօրէից վերակազմութիւն և բարեկարգութիւն, իրապէս ծառայացնելու համար զանոնք ազգային կրօնական արդի պահանջմանց:

Ը. Եկեղեցական բարեկարգութիւն, հետեւելով ժամանակիս ոգւոյն:

Թ. Բարձրացում ամուսնացեալ եկեղեցականութեան վիճակին և դիրքին, համաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ նախկին դրութեանց:

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

Ժ. Կազմութիւն նոր և ընդհանուր կրթական ծրագրի, համաձայն օտմանեան հայրենիքին քաղաքական, տնտեսական և զարգացական նոր պայմաններուն:

(Սոյն կրթական Ընդհանուր Ծրագիրը պէտք է ըստ կարելոյն գոհացնէ մայրաքաղաքի և գաւառի բոլոր դըպրոցական հաստատութեանց ընդհանուր պէտքերը, իրաւասութիւն տալով պատկանեալ մարմիններուն՝ տեղական պահանջմանց համաձայն առաջարկութիւններ ներկայացընելու կեդրոնական իշխանութեան):

ԺԱ. Բարեւաւում կրթական պաշտօնէից վիճակին:

ԺԲ. Հաստատել վարժապետանոցներ, ազգային դաստիարակութեան միօրինակ ուղղութիւն մը տալու կարող ուսուցիչներ և ուսուցչուհիներ պատրաստելու համար:

ԺԳ. Հաստատել գիշերային և ցերեկեայ ձրի դասախօսութիւններ՝ մասնաւորապէս վարժարան յաճախել չկրող չափահաս և անչափահաս գիւղացւոց համար:

ԺԴ. Հաստատել Հայ Գրական Կաճառ մը, որ նպատակ ունենայ Հայ լեզուին և հնախօսութեան մշակութիւնն և հայ դպրութեանց զարգացումը:

Դ Ա Տ Ա Կ Ա Ն

ԺԵ. Ամուսնական և ամուսնական-դատավարական միօրինակ օրէնքներու հաստատում:

ԺԶ. Թոշակաւոր պաշտօնեաներու, ինչպէս նաև պատուակալ պաշտօնատարներու (ղանաղան ժողովներու և Խորհուրդներու անդամք) պատասխանատուութեան և ի հարկին դատավարութեան յատուկ՝ ներքին օրէնքներու հաստատում:

Ե Լ Ե Ի Մ Տ Ա Կ Ա Ն

ԺԷ. Թէ Կեդրոնի և Թէ Գաւառաց, ու նոյն իսկ Թաղային մատակարարութեանց համար Պիւտճէի դրութեան պարտաւորում:

ԺԸ. Մասնաւոր օրինադրով մը կանոնաւորել Ազգային Տուրքի գանձումը, անոր քանակութեան հիմ քանելով իւրաքանչիւր ազգայինի նիւթական կարողութիւնն ըստ յայտարարութեան վճարողին և համաձայնութեան տեղւոյն Թաղ. Խորհուրդին:

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն

ԺԹ. Նկատելով որ Ազգ. Վարչութեանց և Տեսուչ Խորհուրդներու յանձնուած իշխանութիւնը կը վարեն պատուակալ ժողովականներ, որոնք չեն կրնար պահանջուած

ամէնօրեայ գործունէութիւնն ունենալ, հաստատել վճարեալ ձեռնհաս պաշտօնատարներու դրութիւնը, ուսումնասիրելու և նախապատրաստելու համար օրուան ամէն խընդիր, որպէսզի ըստ այնմ՝ անոնց բերած եզրակացութիւններուն վրայ՝ գործադիր իշխանութեան պետն իր անձնական նախաձեռնութեամբ ի հարկին կատարէ պէտք եղած անմիջական տնօրինութիւններ, միշտ ենթարկելով զանոնք պատկանեալ մարմինն վաւերացման:

Ի. Ազգ. Վարչութեանց մօտ անուանում՝ իրաւագէտ խորհրդականներու:

ԻԱ. Անուանում՝ Կրօնական Կրթական, Ելեմտական և Տնտեսական, ինչպէս նաև Վանօրէից և Կտակաց Տեսուչներու, մնայուն ու թոշակաւոր պաշտօնով:

Երուսաղէմ

Նոյեմբեր ամսոյ վերջերը միաբանական ընդհանուր ժողով գումարուեր և իր մէջէն ընտրեր է երեք անձ, որոնք տնօրէն ժողովի անդամներուն հետ բացեր են հանգուցեալ Յարութիւն պատրիարքի սենեակները և ցուցակագրեր են նորա իրեղէններն ու դրամները:

Կառկուռի որդիները՝ Ֆայիկ և Նայիմ Բերութէն հարիւրաւոր օրինակ յայտարարութիւններ ցրուած են Երուսաղէմի հասարակութեան, որով կը ծանուցանեն, թէ Երուսաղէմի պարսպի արևմտեան կողմը գտնուող Մեծ—Արտ անունով յայտնի կալուածը Շէրիի հէօլէթներով և Իլամներով իրենց սեփականութիւնն է, ուստի կզգուշացնեն հասարակութիւնը, որ ոչ տեղ գնէ և ոչ կալուածին վրայ շէնք կառուցանէ. հակառակ պարագային փողը պիտի կորսընցունէ այնպիսին:

Յայտնի է՝ թէ 1886 թուին Յարութիւն Վեհապետեան արքեպիսկոպոսի Պօլսոյ պատրիարքութեան ժամանակ Կառկուռի դատ անունով այդ խնդիրը տաճկահայ